ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ (ԿԱՄԱՎՈՐ) ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի կամավոր ատեստավորման քննության առաջադրանքների կառուցվածքը, տրվում են դրանց նկարագրությունը, պատասխանի գնահատման չափանիշները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հարցաթերթը պարունակում է 79 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 86 միավոր: Բովանդակային առումով առաջադրանքներում առկա են հետևյալ բաժինները. ա. հայկական ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, բ. հայ և համաշխարհային երաժշտական գրականություն, գ. երաժշտության տեսություն:

Առաջադրանքները կազմվել են հետևյալ ձևով.

1.Առաջարկված պատասխաններից ընտրել ճիշտ պատասխանները:

2. Համառոտ շարադրել հարցի բացատրությունը:

3. Շարունակել միտքը:

Առաջադրանքի օրինակ՝ **Յ. Ս. Բախը ծնվել է Գերմանիայի. . . . . քաղաքում:**

4. Ներկայացված մեղեդիներով որոշել ստեղծագործությունը և կոմպոզիտորին:

Առաջադրանքի օրինակ՝

Նոտաներով որոշել ստեղծագործությունը և հեղինակին:

(2 միավոր)



1.
2.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Առաջադրանքները կազմվում են հանրակրթական դպրոցների ծրագրային նյութի հիման վրա: